ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-21/3

« 01 » մարտի 2021թ.

ք. Սպիտակ

Սպիտակ համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Գագիկ Սահակյանի (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Նարինե» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Նաթելա Աֆրիկյանի, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է փողոցների սանիտարական մաքրման և հարակից ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրությամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 9 500 000 (ինը միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[2] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Սպիտակ համայնք	«Նարինե» ՍՊԸ
ք. Սպիտակ, Շահումյան 7	ք. Սպիտակ, Կիրովի 11
ՀՎՀՀ՝ 06801433	ՀՎՀՀ՝ 06801313
Հ/Հ՝ 900242220029	Հ/Հ՝ 220133330146000
ՀՀ ֆին. գախ. գործառն. վարչ.	«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ,
Համայնքի ղեկավար՝ Գ. Սահակյան	Տնօրեն՝ Ն. Աֆրիկյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 01 » մարտի 2021թ. կնքված
ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-21/3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						կետը	ժամկետը
1	90611100	Փողոցների սանիտարական մաքրում և հարակից ծառայություններ	դրամ	9 500 000	1	ք. Սպիտակ, Շահումյան 7	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 31.08.2021թ.

ՁԱՓԱԲԱԺԻՆ N 1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Սպիտակ համայնքի կարիքների համար փողոցների սանիտարական մաքրման և հարակից ծառայությունների

Պետք է իրականացվի Սպիտակ համայնքի փողոցների, մայթերի, հրապարակների, բակային տարածքների, հուշարձանների ու դրանց պատվանդանների, քաղաքային զբոսայգու և ջրավազանի, այլ ինժեներական կառույցների ամենօրյա ձեռքի և մեքենայական մաքրման, լվացման, սանիտարական մաքրման ծառայություններ:

Ամառային մաքրման աշխատանքները պետք է կատարվեն առավոտյան ժամը 07^{00}-11^{00}-ին, երեկոյան 17^{00}-20^{00}:

Փողոցների, մայթերի ու հրապարակների մաքրման ժամանակ հավաքարարը պետք է ապահովի սպասարկվող տարածքներից աղբի ու փոշու հեռացումը, բարելավի միկրոկլիման, և նվազեցնի օդի փոշոտվածության աստիճանը: Սահմանված նորմերին համապատասխան կցված սպասարկվող տարածքի սահմաններում սկսելով աշխատանքը՝ հավաքարարը նախ և առաջ պետք է մաքրի փողոցը կամ հրապարակը, իսկ մեքենայական մաքրման դեպքում նրա մի մասը՝ մերձվածքային տարածքը (0,75մ լայնությամբ գոտիով՝ եզրաքարերից հաշված), այնուհետև մայթերը, հետիոտնի անցումները, քաղաքային տրանսպորտի կանգառները, պուրակները, հուշարձանները, և դրանց պատվանդանները: Հիմնական մաքրումն իրականացնելուց հետո հավաքարարը պետք է հետևի սպասարկվող տարածքի մաքրությանը, հավաքի ծխախոտի մնացորդները, թղթի կտորները, և այլ աղբի մնացորդները, հնարավորին չափով մաքրի մայթերը, մերձվածքային մասը, տեղադրված աղբարկղերի շրջակայքը և տարածքների մաքրությունն ապահովող այլ պարտականություններ:

Մաքրվող տարածքներից հավաքարարն աղբը և փոշին պետք է մաքրի ավլելու միջոցով՝ օգտագործելով նաև գոգաթիակ:Միաժամանակ պետք է մաքրի նաև ջրատար ցանցերի կափարիչները:Հատուկ ուշադրություն պետք է դարձնի սպասարկվող տարածքում տեղադրված աղբարկղերի շրջակայքի սանիտարական վիճակին, աղբի ժամանակին հավաքման վրա:

Մաքրված աղբը և փոշին կույտերով պետք է հավաքի դրանց հետագա տեղափոխման համար նպատակահարմար միջկույտային հեռավորությամբ: Զուգահեռ կույտերը հավաքվում են բանվորների կողմից հատուկ տարաների միջոցով և (կամ) ձեռքով բարձվում ինքնաթափ ավտոմեքենան:

Անձրևաջրատար առուները պետք է մաքրվեն ավազից, տիղմից, հարակից խոտածածկից, ինչպես նաև սելավների հետ հավաքված այլ աղբից:

Ըստ սխեմայի՝ պետք է իրականացվի մեքենայական լվացման աշխատանքները հետևյալ կերպ՝ սկսած փողոցների մայթերի եզրաքարերից 3-ական մետր լայնությամբ:

Ավելվածքը, անձրևաջրատար առուներից հավաքված տիղմը, ավազը և այլ աղբը տեղափոխել քաղաքային աղբավայր: Մեքենաները աղբավայր մեկնելուց հետո անպայման ենթարկել ախտահանիչ միջոցներով լվացման: Ինքնաթափ մեքենաներով աղբի տեղափոխումը իրականացնելու ժամանակ

մեքենաները պարտադիր պետք է ծածկոցներով ծածկված լինեն: Ծառայության մեջ ներգրավված անձնակազմը պետք է ապահովված լինի սեզոնային արտահագուստով:

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

Հ/հ	Ծառայության անվանումը	Չափման միավոր	Ծավալը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը
1	Սանիտարական մաքրման տարածքները	1000քմ	1779,435	2400	4 270 644
2	Մաքրվող տարածքների մեքենայական լվացման աշխատանքներ ջրցան մեքենայով 8 կմ օրական, լվացման օրերի քանակը՝ 70	կմ	560	1729,831	968 705,36
3	Զբոսայգու ջրավազանի հատակի և պատերի մեքենայական լվացում 3 անգամ (7200քմ)	քմ	21600	31	669 600
4	Անձրևաջրատար առուների մաքրում 12 անգամ 4819գմ	գմ	57828	31	1 792 668
5	Ավելվածքի տեղափոխում՝ այդ թվում մեքենայական	խմ	270,85	1163	314 998,55
6	Անձրևաջրատար առուների և զբոսայգու ջրավազանի մաքրումից ածաջացած աղբի տիղմի բարձում և տեղափոխում	խմ	171,25	1163	199 163,75
7	Աղբավայրի խնամք-աղբի հարթեցում, հողով ծածկում	խմ	6421,1	200	1 284 220
	Ընդամենը				9 500 000++
	Ծառայության մատուցման ժամկետը				

Սկիզբը	Սկիզբը
պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 31.08.2021թ.

Սանիտարական մաքրման իրականացման նվազագույն ժամանակացույցը

հ/հ	Մաքրվող փողոցների, հրապարակների, հուշարձանների և զբոսայգիների անվանումը	Մեքենայական մաքրման ենթակա փողոցների երկարությունները մ	Մաքրվող փողոցների, երկարությունները մ/ մակերեսը քմ	Մաքրվող մայթերի մակերեսները քմ	Շաբաթվա օրեր						
					I	II	III	IV	V	VI	VII
1	Ն.Աճեմյան փողոց	-	468մ/1404քմ	1126քմ		///				///	
3	Թումանյան փողոց	-	780մ/3120քմ	984քմ				///			
4	Թորոսյան փողոց	370մ	170մ/510քմ	2190քմ	///	///	///	///	///		
5	Ալ.Մանուկյան-Ս.Ավետիսյան փողոցների խաչմերուկից մինչև Ն.Աճեմյան խաչմերուկ	100մ	-	-		///		///		///	
	Ալ.Մանուկյան (նախկին ավտոկայանի հատված)	-	150մ/1300քմ	-		///				///	
6	Ալ.Մանուկյան 1-ին նրբանցք	300մ	-	1233քմ	///	///	///	///	///	///	
7	Շահումյան խճուղի	550մ	414մ/1242քմ	4884քմ	///		///		///		
9	Ս.Ավետիսյան հրապարակ	-	-	3540քմ		///		///		///	
10	Մյասնիկյան փողոց	-	310մ/1240քմ	1860քմ				///			
11	Երկրաշարժի զոհերի հուշարձան	-	-	990քմ	///						

	Ս.Ավետիսյան հրապարակի շենքերի բակային տարածք	-	200մ/400քմ	-	ամիսը 2 անգամ
	Ս.Ավետիսյան 7,15/1,15/2,17/1,17/2,17,19/1,19/2, Թորոսյան 26, Եկեղեցու հարակից փողոց	640մ	-	-	ամիսը 2 անգամ
14	Շիրակի խճուղի	-	680մ/2720քմ	1620քմ	ամիսը 2 անգամ
16	Առափնյա փողոց	-	750մ/1125քմ	-	ամիսը 2 անգամ
17	Կենտրոն-1 թաղամաս		750մ/1500քմ	440քմ	ամիսը 2 անգամ
19	Կենտրոն-2 թաղամաս	-	500մ/1000քմ	-	ամիսը 2 անգամ
20	Եռանկյունի թաղամասի բակային տարածք	204մ	-	-	ամիսը 2 անգամ
21	Այգեստան թաղամաս (4-րդ հիմն դպրոցի հարակից հատված և թունել)	-	130մ/520քմ	480քմ	ամիսը 2 անգամ
22	Ոփյան փողոց	-	580մ/870քմ	-	ամիսը 2 անգամ
23	Չարենցի փողոց	-	640մ/1280քմ	-	ամիսը 2 անգամ
24	Պանրագործների թաղամաս	-	200մ/600քմ	624քմ	ամիսը 2 անգամ
25	Վարպետաց թաղամաս	3500մ	-	4125քմ	ամիսը 1 անգամ
26	Տեր-Սիմոնյան փողոց	1250մ	-	1030քմ	ամիսը 1 անգամ
27	Անձրևաջրատար առուների մաքրում	4819մ			Տարին 12 անգամ
28	Քաղաքային զբոսայգու ջրավազանի մաքրում, լվացում	7200քմ			3 անգամ Ապրիլ, հունիս, օգոստոս, ամիսներին
29	Զբոսայգու աստիճաններ	900			ամիսը 2 անգամ
30	Ալ.Մանուկյան փողոցից Մյասնիկյան փողոց տանող աստիճաններ	130			ամիսը 2 անգամ

Սանիտարական մաքրման ծառայությունները պետք է իրականացվեն Սպիտակ համայնքի ավագանու կողմից հաստատված սխեմայի համաձայն:

Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջներ

Չափաբաժին	Մասնագետների		
	որակավորումը	աշխատանքային փորձը	
		ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը
1	երկու վարորդ		
	մեկ տրակտորիստ		
	մեկ բանվոր		
	չորս հավաքարար		

Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներին ներկայացվող

Չափաբաժին	Տեխնիկական միջոցի անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
1	ջրցան-ավլող մեքենա	ցանկացած	1
	բեռնատար	ինքնաթափ	1
	տրակտոր թրթուրավոր	ցանկացած	1
	տրակտոր էքսկավատոր	ցանկացած	1

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սպիտակ համայնք
ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06801433
Հ/Հ՝ 900242220029
ՀՀ ֆին. գախ. գործառն. վարչ.
Համայնքի ղեկավար՝ Գ. Սահակյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Նարինե» ՍՊԸ
ք. Սպիտակ, Կիրովի 11
ՀՎՀՀ՝ 06801313
Հ/Հ՝ 220133330146000
«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ,
Տնօրեն՝ Ն. Աֆրիկյան

(ստորագրություն)

06801313
«ՆԱՐԻՆԵ»
«НАРИНЕ»
«NARINE»

Հավելված N 2
« 01 » փետրվարի 2021թ. կնքված
ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԾՁԲ-21/3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում						
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	Ընդամենը
1	90611100	Փողոցների սանիտարական մաքրում և հարակից ծառայություններ	1 570 000	3 154 000	4 731 000	6 308 000	7 885 000	9 500 000	9 500 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սպիտակ համայնք
ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06801433
Հ/Հ՝ 900242220029
ՀՀ ֆին. գախ. գործառն. վարչ.
Համայնքի ղեկավար՝ Գ. Սպիակյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Նարինե» ՍՊԸ
ք. Սպիտակ, Կիրովի 11
ՀՎՀՀ՝ 06801313
Հ/Հ՝ 220133330146000
«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ,
Տնօրեն՝ Ն. Աֆրիկյան

(ստորագրություն)